Կարգապահական գործ թիվ ԿԳ-18041

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 11-ի թիվ 226-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/174-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող Սեդրակ Ասատրյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահագն Դանիելյանին (արտոնագիր՝ թիվ 425) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 23.02.2018թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Վահագն Դանիելյանն ունի 95.000 (իննսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հուլիսից մինչև 2018թ. հունվար (ներառյալ) ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

27.02.2018թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 95-Ա/ԿԳ-18041 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Վահագն Դանիելյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործի արագացված կարգի համաձայն՝ Սույն կարգապահական գործը 05.03.2018թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 11.08.2018թ., ժամը՝ 11:24-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Վահագն Դանիելյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Վահագն Դանիելյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 15.04.2002թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 15.06.2018թ. տրամադրված տեղեկանքով),
2) փաստաբան Վահագն Դանիելյան ունի 95.000 (ինսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հուլիսից մինչև 2018թ. հունվար (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 23.02.2018թ. տրամադրված տեղեկանքով),
3) փաստաբան Վահագն Դանիելյանն իր անդամավճարի պարտքը մարել է (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 10.08.2018թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն Վահագն Դանիելյանի (արտոնագիր՝ 425, ստացված՝ 15.04.2002թ.) նկատմամբ 2013-2018թթ. ընկած ժամանակահատվածում 6 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (5 ավարտված և 1 ընթացիկ վարույթ): Անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով ավարտված կարգապահական վարույթներից երկուսով Վահագն Դանիելյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Խորհրդի՝ 03.03.2016թ. թիվ ԿԳ/51-Ա որոշմամբ անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով:

Խորհրդի՝ 06.10.2016թ. թիվ ԿԳ/115-Ա որոշմամբ անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողության ձևով:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում

է, որ փաստաբան Վահագն Դանիելյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ *փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:*

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի **(այսուհետ նաև՝ Կարգ)** 7-րդ կետի՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատախանատվության:*

ՀամաձայնԿարգի 17-րդ կետի՝ *«Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման:* **Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել»:**

Նշված Կարգը հաստատվել է 26.12.2013թ.-ին, ուստի 16-րդ և 17-րդ կետերում նշված ժամկետները պետք է հաշվարկել այդ ժամանակահատվածից սկսած:

Վերոնշված կանոնների վերլուծությունից հետևում է, որ երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել:

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Սույն դեպքում համաձայն 10.08.2018թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի տեղեկանքի Վահագն Դանիելյանը անդամավճարի գծով պարտքն ամբողջությամբ վճարել է: Սակայն, ՀՀ Փաստաբանների Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 15.06.2018թ-ի տեղեկանքից հետևում է, որ փաստաբան Վահագն Դանիելյանի նկատմամբ նախկինում կիրառվել է Պալատի Կարգի 17-րդ կետը, ուստի Վահագն Դանիելյանն ենթակա է պատասխանատվության:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը վճարել է անդամավճարի գծով պարտքն ամբողջությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վահագն Դանիելյանին (արտոնագիր՝ թիվ 425) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Վահագն Դանիելյանի (արտոնագիր՝ թիվ 425) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Վահագն Դանիելյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սեդրակ Ասատրյան

11 օգոստոսի 2018թ.
թիվ ԿԳ/174-Ա
ք. Երևան